

MASTERSEAL 525

Էլաստիկ, երկբաղադրիչ ջրամեկուսիչ նյութ է, կայուն է ուլտրամանուշակագույն ճառագայթների նկատմամբ:



Բնութագրություն

MASTERSEAL 525-ը ցեմենտի հիմքով, ակրիլով հագեցված երկբաղադրիչ անջրանցիկ պատվածք է: Պատվում է բետոնի, ալյուսի, բազալտի և այլ պինդ շինարարական նյութերի վրա: Այն հեշտությամբ պատվում է մազե վրձնի, գլանիկի (валик) կամ ծեփիչի օգնությամբ և զոյացնում է էլաստիկ, անջրանցիկ, անկար, դժվար մաշվող մեմբրան: Նյութը զոյացնում է արդյունավետ խոչընդոտ ջրում պարունակվող աղերի և մթնոլորտային գազերի նկատմամբ:

MASTERSEAL 525-ը կարող է կիրառվել արտաքին (բաց) մակերևույթների ջրամեկուսացման համար, չի պահանջում մակերևույթի պաշտպանություն, կայուն է մարդկանց ոչ ինտենսիվ շարժման նկատմամբ:

Կիրառման ոլորտը

- Ներքին և արտաքին շինությունների ուղղաձիգ և հորիզոնական մակերևույթներ,
- շենքերի և շինությունների հիմքերի ու նկուղների ջրամեկուսացում,
- տանիքների համար անջրանցիկ ծածկույթ,
- տեռասներ, ծաղկանոցներ և ջերմոցներ (թեթև բեռնվածության դեպքում կարող է կիրառվել առանց մակերևութային պաշտպանության),
- «խոնավ տարածքներ» (վաննաներ, սանհանգույցներ, խոհանոցներ և պատշգամբներ),
- լողավազաններ, ջրամբարներ (այդ թվում խմելու ջրի),
- քաղցրահամ և ծովային ջրանցքների համար ծածկույթ,
- մարմարի, գրանիտի և կերամիկական սալիկի համար հիմք, որը կանխում է ջրի թափանցումը և մակերևույթի վրա խոնավության կուտակումը,

- բետոնե մակերևույթների պաշտպանում ածխածնի և քլորի քայքայիչ ազդեցությունից:

Առավելություններ

- 1մմ հաստությամբ պատումը զոյացնում է կարբոնացման նկատմամբ կայուն մակերևույթ՝ համարժեք 80սմ բետոնին,
- անջրանցիկություն՝ դիմադրություն մինչև 7 բար ճնշմանը (70մ-անոց ջրային սյան ճնշում),
- պատրաստման և կիրառման պարզություն, չի պահանջում հատուկ հմտություններ, պատվում է վրձնի, գլանիկի (валик) կամ փոշեցրիչի (распылител) միջոցով,
- սպիտակ գույնի մակերևույթը կայուն է ուլտրամանուշակագույն ճառագայթման նկատմամբ: Չի պահանջում մակերևութային պաշտպանության պատում: Գունային պիգմենտների կիրառման դեպքում ապահովվում է էսթետիկապես հաճելի վերջնական ծածկույթ,
- զերազանց հարակցման (ադիզիայի) հատկություններ: Խաչաձև շաղկապում՝ շաղկապում է միմյանց թափանցելի և անթափանց մակերևույթները,
- էլաստիկություն,
- խմելու ջրի հետ կոնտակտի դեպքում անվնաս է: Առկա է Քիմիական Վերլուծության Լաբորատորիայի եզրակացությունը՝ BS 6920 ստանդարտի պահանջներին համապատասխան,
- հարմար է մարդկանց ոչ ինտենսիվ շարժումների դեպքում,
- ածխածնի և քլորի երկօքսիդի իոնների նկատմամբ բարձր դիմադրողականություն,
- ավանդական ջրամեկուսիչ նյութերի վուլկանացման 7-8 օր կազմող ժամկետի հետ համեմատած՝ նյութը կարող է պատվել «թարմ» (24 ժամանոց) բետոնի վրա:

Կազմը

MASTERSEAL 525-ը կազմված է հատուկ ընտրված ցեմենտից, սիլիկատային ավազից և մոդիֆիկացված պոլիմերային հավելանյութերից (փոշու տեսքով)՝ ակրիլային համապոլիմերների ու հեղուկ ազդակի (агент) շաղախ ներկայացնող հեղուկ բաղադրիչի հետ միասին:

Միջազգային չափանիշներին համապատասխանություն

MASTERSEAL 525-ը համապատասխանում է “Methods for determination of the viscosity of liquids” BS 188 ստանդարտի պահանջներին:

Մոտավոր ծախսը

Առաջին շերտ՝ 1.2 կգ/մ²
 Երկրորդ շերտ՝ 1.2 կգ/մ²
 Երրորդ շերտ՝ 1 կգ/մ²

Կիրառման եղանակը**Հիմքի նախապատրաստումը**

MASTERSEAL 525-ով պատվող մակերևույթը պետք է լինի չոր, հնարավորինս հարթ և մաքուր: Խորհուրդ է տրվում հանգամանորեն մաքրել մեքենայի յուղերի, ճարպերի, փոշու, բետոնի վուլկանացման նյութերի, ձուլման (литье) արդյունքում առաջացած քիմիական ազդակների և շաղկապումը դժվարացնող մնացած այլ կեղտոտ ցանկացած մնացորդներ: Խորհուրդ է տրվում աղտոտվածությունները հեռացնել օդային կամ ջրային թեթև շիթի օգնությամբ: Փոքր տարածքների համար հնարավոր է մետաղական խոզանակի կիրառումը: Մակերևույթի դատարկ մասերն ու ճաքերը պետք է լցափակվեն հատուկ վերանորոգիչ խառնուրդներով, ինչպիսին են **MASTERSEAL 590**-ը, **MASTEREMACO S88 C**-ն կամ **MASTEREMACO N 90**-ը: Խորհուրդ է տրվում փխրուն բետոնը հեռացնել մինչև ամուր բետոնի հայտնվելը և վերականգնել այն վերանորոգիչ խառնուրդով (**MASTEREMACO S 88 C** կամ **MASTEREMACO N 90**): Օգտագործելուց առաջ մակերևույթը խոնավեցնում են մաքուր ջրով այն աստիճանի, որ խոնավությունը տեսանելի դառնա, սակայն ջրային կաթիլներ չառաջանան:

Պատրաստումը

Նյութը արտադրվում է հեղուկ և չոր բաղադրիչների առանձին փաթեթավորումների ձևով: **MASTERSEAL 525**-ի B հեղուկ բաղադրիչը լցվում է մաքուր դուլի մեջ, A չոր բաղադրիչը դանդաղ լցվում ու խառնիչով (миксер) խառնվում է 3-5 րոպե, 400-600 պտույտով մինչև առանց կոշտուկների համասեռ լուծույթ ստանալը: Շաղախը պետք է թողնել 3-5 րոպե և նորից խառնել 30 վայրկյանի ընթացքում մինչև վերջինիս լրիվ պատրաստ լինելը՝ կիրառման համար:

Խառնուրդի հարաբերակցությունը

MASTERSEAL 525	A բաղադրիչ	B բաղադրիչ
Խառնուրդի քանակ	25 կգ	8 կգ
Խառնուրդի խտություն	1.8 կգ/լիտր	

Կիրառումը

MASTERSEAL 525-ը պատվում է կարճ մագիկավոր վրձնի կամ գլանիկի (валик) օգնությամբ: Անհրաժեշտության դեպքում հնարավոր է պատել ծեփիչով: Խորհուրդ է տրվում նյութը պատել երկու կամ երեք շերտով՝ կախված անհրաժեշտ հաստությունից: Յուրաքանչյուր հաջորդ շերտը խորհուրդ է տրվում պատել նախորդի չորանալուց հետո, ընդ որում շերտերը պետք է պատվեն միմյանց ուղղահայաց: 1000մ²-ից ավել տարածքների համար խորհուրդ է տրվում փոշիացման համակարգը:

Օգտակար տեղեկատվություն

- կիրառել **MASTERSEAL 525**-ը +5°C-ից մինչև +25°C ջերմաստիճանային պայմաններում,
- նյութը չօգտագործել անձրևոտ կամ քամոտ եղանակին,
- նյութը ձեռք է բերում մեխանիկական ամրություն՝ 2 օրվա ընթացքում, անջրանցիկություն՝ 7 օրվա ընթացքում և վերջնական ամրությունը ձեռք է բերում 14 օրվա ընթացքում,
- արտաքին կիրառման դեպքում խորհուրդ է տրվում մակերևույթը պաշտպանել արևի ճառագայթներից, քամուց, անձրևից և սառչելուց կիրառումից հետո առաջին օրերի ընթացքում,
- խորհուրդ չի տրվում պատել նյութի շերտը 1.2մ-ից հաստ:

Փաթեթավորում

A բաղադրիչ՝ 25կգ-անոց պարկեր
 B բաղադրիչ՝ 8կգ-անոց թիթեյա տարաներ (թիթեղամաններ):

Պահպանման պայմանները

Նյութը պետք է պահել արևի ճառագայթներից հեռու, գետնից վերև վիճակում պալլետի վրա, պաշտպանված տեղումներից և խոնավությունից: Նյութը պահեստավորելիս թույլ չտալ ինտենսիվ դասավորում:

Տեխնիկական բնութագրեր

Խտություն	1.8 կգ/լ
Անջրանցիկություն (DIN 1048)	7 բար – ջրային սյան 70մ
Չզման %	: >5% (չի տեղաշարժվում)
Առաջնային մակերևութային կլանում	>95% վերականգնում հսկողությունից հետո
Պոկման ուժ	1.5 Ն/մմ ² (28 օր հետո)
Դիֆուզիոն դիմադրություն CO ₂	R>357մ, Sc 89 սմ (1մմ դիֆ.), Sc – բետոնի համարժեք հաստություն
Քլորիդային իոնների դիֆուզիա	Ձրոյական թափանցելիություն 90 օրվա ընթացքում
Քլորիդային իոնների դիֆուզիայի գործակից	1.04x10 ⁻⁷ սմ ² /c
Թթվածնի դիֆուզիայի գործակից	DO ₂ 7.6x10 ⁻⁶ սմ ² /c
Դիմադրություն ծռմանը	4 Ն/մմ ²
Դիմադրություն սեղմմանը	10 Ն/մմ ²
Դիմադրություն տեղաշարժմանը (сдвиг)	2,5 Ն/մմ ²
Կապիլյար ջրի կլանում	0,04 կգ/մ ²
Լատեքսով ջրի կլանում	2%
Շահագործման տիրույթ	-20°C - +80°C